



Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ կոմերցիոնական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

<https://grqaser.org/hy/donate>

Ստուգված

Ֆրանսիական գրականություն, Արձակ, Պատմվածք

13+

Թարգմանիչ՝ Կարեն Սիմոնյան

Ալֆոնս Դոդե

Վերջին դասը

Էլզասցի մանչուկի պատմածը

Այդ օրը դարոցից ուշացել և շատ էի վախենում, թե նկատողություն կստանամ, հատկապես, որ պարոն Ամելը հարցնելու էր դերբայների կանոնը. իսկ ես ոչինչ չգիտեի: Նույնիսկ մտքովս անցավ դասերից փախչել ու գլուխս քամուն տալ:

Օրն էլ շատ տաք, սքանչելի օր էր...

Ինձ էին հասնում մոտակա անտառում երգող կեռնեխների ձայները: Ես նաև լսում էի, թե Հռիպերյան մարգագետնում, սղոցարանից այն կողմ ինչպես են գերմանացիները շարային պարապմունք անցկացնում:

Քաղաքապետարանի մոտով անցնելիս տեսա, որ հայտարարությունների տախտակի մոտ ահագին ժողովուրդ է խռնվել: Վերջին երկու տարիներին մենք այդ տախտակից էինք ստանում տանուլ տված ճակատամարտերի և պարետի անձնական հրամանների մասին բոլոր անախորժ լուրերը... Կանգնելու ժամանակ չունեի, բայց մտքովս անցավ. «Տեսնես նորից ի՞նչ է պատահել»:

Հայտարարությունների տախտակի մոտ իր գործավոր-օգնականների հետ կանգնած դարբինը ինձ տեսնելով ձայն տվեց.

— Դպրո՞ց ես շտապում, մանչուկ... Իզո՞ւր ես շտապում... Միևնույն է՝ չես ուշանա:

Մտածեցի, թե նա պարզապես ծաղրում է ինձ, և շնչակտուր վազեցի պարոն Ամելի տան դիմաց գտնվող փոքրիկ պարտեզը:

Միշտ էլ դասի սկզբում այնպիսի աղմուկ էր լինում, որ լսելի էր նույնիսկ փողոցից: Աշակերտները չրիկացնում էին սեղանների կափարիչները, և ուրիշներին չստիպելու համար ականջները խցկած և լավ անգիր անելու համար էլ միաբերան ու բարձր կրկնում էին դասը: Եվ այդ ժխորի մեջ լավում էին ուսուցչի քանոնի շրիկոցներն ու նրա ձայնը.

— Հանգի՛ստ, մի աղմկեք...

Կարծում էի, թե ամենօրյա այդ աղմուկի մեջ կկարողանամ աննկատ հասնել իմ նստարանին, բայց, հակառակի պես, այսօր այնպիսի մի լռություն էր տիրում, ինչպես սովորաբար լինում էր կիրակի օրերին:

Բաց պատուհանից տեսա, որ իմ դասընկերները արդեն նստել են իրենց տեղերը: Իսկ պարոն Ամելը իր ահարկու քանոնը թևի տակ ետ ու առաջ է քայլում դասարանում: Էլ ո՞նց կարող էի աննկատ բացել դուռն ու ներս մտնել: Պատկերացնո՞ւմ եք վիճակս... Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպես էի կարմրել ու դողում...

Բայց՝ չէ: Պարոն Ամելը ինձ նայեց ու փաղաքշական ձայնով ասաց.

— Անցիր տեղդ, Ֆրանս, զավակս... Իսկ մենք արդեն առանց քեզ էինք սկսելու:

Շտապեցի գրավել տեղս... Եվ հետո միայն նկատեցի, որ ուսուցիչը հագել է տոնական իր կանաչ սերթուկը, կապել է ծալքավոր փողկապ, իսկ գլխին դրել է ասեղնագործ մետաքսե մի սև թասակ: Այդպես տոնական էր նա հագնվում այն օրերին միայն, երբ դպրոց էր գալիս տեսուչը կամ տեղի էր ունենում պարզևներ հանձնելու արարողություն: Բայց դասարանն էլ զարմացրեց իր հանդիսավորությամբ:

Իսկ ամենից շատ ես ապշեցի, երբ ետևի նստարաններին տեսա լուռ նստած ծերունի Հաուզերին, որը իր միշտ անբաժան եռանկյունի գլխարկով էր, հետո աչքովս ընկավ նախկին քաղաքագլուխը, ապա՝ նախկին փոստատարն ու գյուղի մյուս բնակիչներից շատերը: Բոլորն էլ տխուր էին: Հաուզերի ծնկներին դրված էր հին ու մաշված այբբենարանը, իսկ քթին՝ վիթխարի ակնոց կար...

Մինչ զարմացած շուրջս էի նայում, պարոն Ամելը ելավ ամբիոն և նույն մեղմ, բայց ձայնի լուրջ երանգով դիմեց մեզ.

— Երեխանե՛ր, այսօր վերջին անգամն է, որ պարապելու եմ ձեզ հետ: Բեռլինից հրաման է եկել, որ Էլզասի ու Լոթարինգիայի դպրոցներում դասավանդվի միայն գերմաներեն... Նոր ուսուցիչը կժամանի վաղը: Այսօր Ֆրանսերենի վերջին դասն է: Խնդրում եմ հնարավորին չափ ուշադիր լինել...

Նրա խոսքերը շանթահարեցին ինձ: Ա՛հ, սրիկանե՛ր... Ուրեմն, քաղաքապետարանի պատին փակցրած հայտարարությունը այդ մասին էր:

Ֆրանսերենի վերջին դասը...

Իսկ ես հագիվ էի գրել սովորել: Ուրեմն, հիմա այլևս երբեք չեմ հասցնի... Ուրեմն, այսպես թերուս էլ ապրելու եմ... Ես ափսոսացի իմ կորցրած ժամանակը, ափսոսացի բաց թողած դասերս, որոնց ընթացքում կամ գնում էի սառած գետի վրա

չմուշկներով սահելու, կամ էլ անտառում թռչունների բներ գտնելու... Ափսոսացի, որ չեմ կարողացել այն գրքերը, որոնք ձանձրալի էին թվում: Իսկ քերականությունն ու իմ ժողովրդի սուրբ պատմությունը այժմ թվում էին իմ վաղեմի բարեկամները, որոնցից բաժանվելը կսկծացնում էին սիրտս: Իսկ պարոն Ամելը... Այն մտքից, որ նրան տեսնելու առիթ այլևս չեմ ունենալու, մոռացա բոլոր պատիժներն ու քանոնի հարվածները, որ երբևէ ստացել էի իմ ուսուցչից:

Խեղճ պարոն Ամել... Կիրակնօրյա, տոնական իր զգեստը նա հագել էր այս վերջին դասի պատվին: Ես հասկացա նաև, թե ինչու են եկել ու ետևի նստարաններին շարվել մեր գյուղի մեծերը: Նրանք եկել էին ասես զղջալու, որ ժամանակին անկանոն են հաճախել դպրոց: Ու նաև յուրովի երախտագիտություն հայտնելու ուսուցչին՝ քառասնամյա հավատարիմ ու նվիրված նրա ծառայության համար: Եկել էին վերջին պատիվը տալու հայրենիքին, որ կորչում էր...

Մտքերս ընդհատվեցին, երբ լսեցի իմ անունը: Դասը պատասխանելու իմ հերթն էր... Ի՛նչ ասես չէի տա, որպեսզի բարձրաձայն ու հստակ, առանց կմկմալու կարողանայի կրկնել դերբայի կանոնները: Բայց առաջին իսկ բառերից ամեն ինչ խառնեցի իրար, և մի ոտքից մյուսին հենվելով, հուսահատ լռեցի, չհամարձակվելով նույնիսկ նայել ուսուցչիս: Իսկ պարոն Ամելն ասաց.

— Ֆրանս, զավակս, ես քեզ չեմ կշտամբի: Առանց այն էլ դու հիմա պատժված ես: Իհարկե... Օրերն անցնում էին, իսկ դու մտածում էիր՝ շտապելու ի՞նչ կարիք կա: Վաղն էլ կհասցնեմ սովորել: Բայց տեսնո՞ւմ ես, թե ինչե՞ր կարող են պատահել... Մեր էլզասը միշտ վաղվան է թողել մայրենի լեզուն սովորելը, և հենց դրանում է նրա ամենամեծ դժբախտությունը... Հիմա նրանք մեզ իրավունք ունեն ասելու. ինչպե՞ս թե... դուք ձեզ ֆրանսացի եք անվանում, բայց մայրենի լեզվով ոչ խոսել գիտեք, ոչ էլ գրել... Ֆրանս, զավակս, քո մեղքը երբեք ավելին չէ, քան ուրիշներինը: Բոլորն են մեղավոր, բոլորը... Ձեր ծնողները չեն հետևել, որ դուք սովորեք ձեր մայրենին: Նրանք ավելի մեծ սիրով ուզեցել են ձեզ սովորեցնել մի քանի գրոշ ավելի վաստակելու միջոցը... Իհարկե, ես էլ եմ մեղավոր... Մի՞թե երբեմն ձեզ չեմ արձակել դասերից՝ առանց խղճի խայթ զգալու...

Եվ այսպես, պարոն Ամելը աստիճանաբար անցավ ֆրանսերենին, խոսեց այն մասին, որ մարդու համար աշխարհի ամենագեղեցիկ լեզուն իր մայրենին է, որ պետք է պահպանել մայրենի լեզուն, երբեք չմոռանալ մայրենին, որովհետև քանի դեռ օտարի լծի տակ գտնվող ժողովուրդը իր լեզվին լավ է տիրապետում, նա կարծես տիրապետում է իր գնդանի բանալուն...

Հետո պարոն Ամելը ձեռքն առավ քերականության դասագիրքը և սկսեց բացատրել հերթական դասը: Ես զարմացել էի, որ այդքան լավ եմ հասկանում նրա ասածները: Հավանաբար, երբեք այսքան ուշադիր չեմ լսել նրան, և նա էլ երբեք այսպիսի համբերությամբ չէր բացատրել... Հեռանալուց առաջ, խեղճ ծերունին ասես կամենում էր մեզ հաղորդել իր բոլոր գիտելիքները, կամենում էր այդ ամենը միանգամից ներարկել մեզ:

Քերականությունից անցանք գրավորին: Պարոն Ամելը գրավորի համար վայելչագրական նոր օրինակներ էր ամրացրել մեր նստարաններին: «Ֆրանսիա — Էլզաս, Ֆրանսիա — Էլզաս» — արտագրում էինք մենք զարմանալի մի ջանասիրությամբ: Դասարանում կատարյալ լռություն էր տիրում և միայն գրիչների ճռռոցներն էին լսելի... Այդ լռությունը չկարողացան խախտել նույնիսկ մայիսյան մի քանի բզեզներ, որոնք բզզալով ներխուժեցին դասարան: Ի՛նչ աղմուկ կբարձրանար մեկ ուրիշ ժամանակ: Բայց հիմա ոչ ոք ուշադրություն չդարձրեց: Ուշադրություն

չդարձրին նույնիսկ փոքրիկները, որոնք շրթունքները սեղմած, մի այնպիսի խնամքով էին թեք գծեր քաշում, ասես արդեն ֆրանսերեն գրելիս լինեին... Դպրոցի տանիքին մնչում էին աղավնիները, և նրանց ականջ դնելիս, ինքս ինձ ասացի. «Մի օր նրանց էլ կստիպեն գերմաներեն երգել»:

Երբեմն հայացքս կտրելով տետրակից, նայում էի պարոն Ամելին, որն անշարժ նստած, ասես հրաժեշտ էր տալիս այն ամենին, ինչ շրջապատում էր նրան: Աստված իմ... Քառասուն տարի շարունակ նա նստել էր իր այդ աթոռին և նրա դիմաց միշտ նույն բակն ու դասասենյակն էր եղել: Միայն թե նստարաններն էին ժամանակի ընթացքում հղկվել: Շագանակեմիներն էին ձգվել դեպի երկինք, իսկ հենց իր՝ պարոն Ամելի ձեռքով երբեմնի տնկած գայլուկը հիմա հասել էր տանիքին: Պատկերացնում եմ, թե ի՞նչ ծանր էր նրա համար հրաժեշտ տալ այդ ամենին: Հատկապես, երբ լսելի էր նաև, թե ինչպես է քույրը ետ ու առաջ անում վերնահարկում՝ սնդուկները դասավորելով: Հաջորդ օրը նրանք մեկնելու էին, ընդմիջտ հեռանալու էին մեր կողմերից:

Այնուհանդերձ, նա այնքան ուժ ունեցավ, որպեսզի ավարտի իր վերջին դասը:

Գրավորից հետո անցանք պատմությանը, և ապա փոքրիկները խմբովին սկսեցին ծոր տալ՝ բա՛, բե՛, բի՛, բո՛, բո՛ւ... Ծերուկ Հաուզերը՝ ականոցն աչքին և դասագիրքը ձեռքին, նրանց հետ սերտում էր այբուբենը: Նա ջանում էր իր հնարավորությունների չափ: Նրա ձայնը հուզմունքից դողում էր, իսկ նրան լսելը այնքան զվարճալի էր, որ չգիտեինք՝ ծիծաղե՞նք, թե լանք... Չէ՛, այդ դասը երբե՛ք չեմ մոռանա...

Հանկարծ եկեղեցու զանգերը խփեցին կեսօր: Հետո հնչեց աղոթքի զանգահարությունը: Եվ նույն պահին էլ պատուհանների տակ թնդացին զորավարժությունից ետ դարձող պրուսացիների շեփորների ձայները: Պարոն Ամելը գունատվեց ու ելավ ամբիոն: Նա երբեք այդքան խոշոր չէր թվացել ինձ:

— Բարեկամներս,— սկսեց նա:— Բարեկամներս... Ես... Ես...

Բայց ինչ-որ մի կոշտ բան խեղդում էր նրան: Ուստի չկարողացավ խոսքը ավարտել: Նա շրջվեց դեպի գրատախտակը, մի կտոր կավիճ վերցրեց և ամբողջ ուժով սեղմելով, մեծ-մեծ տառերով գրեց.

«Կեցցե՛ ֆրանսիան»:

Հետո քարացած կանգնեց, գլուխը պատին հենեց և ձեռքով անխոս նշան արեց մեզ. «Հիմա՛ այլևս վերջ... Գնացե՛ք»: